Պարույր Սևակ

Վերջին փոստից

Բաց եմ անում օրվա լրագիր-թերթերը.
-«Հեռագրեր», «Լուրեր» և «Վերջին ժամ»,
Նորից հաղորդումներ «Վերջին փոստից»:-
-Ամերիկացիք անվերջ
Ջինում են թուրքական և հունաց բերդերը,
Արյան մեջ ճողփում է Ինդոնեզիան,
Գներն են բարձրանում Անգլիայում սաստիկ:
Ֆունտ ստերլինգն այնտեղ
Ճգնաժամի պարապ ժանիքների ներքո
Բզկտվում է արդեն,
Մինչդեռ Եվրոպայի ավելի քան կեսում
Ահազանգի պես գոռ
Հնչում է զնգոցը դոլլարների...
Ամերիկացիք իրենց երկիրն են լրտեսում,
Որ բաց անեն ատյան
«Անհնազանդ անձանց» գոյության դեմ...
Գլորվել է գովված «դեմոկրատիան»,
Եվ զուսպ, ներողամիտ մի ժպիտով
Կանգ է առել լինչյան դատաստանի հանդեպ...
Իսկ ատոմյան ռո՞ւմբը,
Որով կամենում են ահաբեկել, անդարձ

Թաղել նոր խաղաղված աշխարհի հանգիստը,
Իսկ նոր պատերազմի ուրվակա՞նը...
Փակում եմ թերթերը զայրույթով մի արդար.
-Լսեցեք դուք, միստրը,
Լռեցե՛ք դուք, միստրը,
Բավակա՛ն է:
Ճիշտ է, մեր մարդկային բնությունը հաճախ
Կարծես մոռացկոտ է,
Մի՛ մոռացեք սակայն, որ խոսում է ձեզ հետ
Պատերազմում հաղթած ռազմիկը
Եվ ո՛չ թե վախկոտը:
Մի՛ մոռացեք սակայն.
(Այստեղ մոռացումը լուրջ վտանգ է),
Եվ հիշեցե՛ք, եթե մոռացկոտ եք,
Որ այս՝ նա է խոսում,
Ում հաղթական ձայնի արձագանքը
Դեռ չի մարել այնտեղ -
Գոթական շենքերի կամարների տակ սուր...
Մի՛ մոռացեք սակայն,
Որ այս՝ նա՛ է խոսում,
Որի ձեռքով վառված թեժ խարույկը
Տաք մոխիրի ներքո մխում է լուռ,
Եվ պահպանում է դեռ կայծեր հրի
Սաքսոնական թավուտ անտառներում,
Ալպիական լեռանց կատարներին:
Այդ հիշելով, միստրը,
Մոռացե՛ք ատոմյան ձեր արկերը,
Մոռացե՛ք արկերը, բավակա՛ն է...
Մենք, որ պատերազմը
Իր ողջ կենդանությամբ ճաշակել ենք,

Հաճույքով չենք դիտում
Կրկին մարմնավորվող նրա ուրվականը...
Ընդունեք այս, միստրը,
Ո՛չ թե սպառնալիք,
Այլ իբրև պարզ նոտա նրանց կողմից, որոնք
Մաքրեցին աշխարհից գերմանական արնոտ սվաստիկը...
Ընդունեցեք նաև այս խոսքերով՝
Հարկ լինելու դեպքում կրկին մարտնչելու
Եվ հաղթելու մեր վառ հավաստիքը...

17.II.1947թ.
Երևան